«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Միքայելյան Գոհար Ռոբերտի

Մանկապարտեզ՝ Երևանի, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 111 մ/մանկապարտեզ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1

Ազգային տոներն ու ծեսերը՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների համար կրթական ու դաստիարակչական նյութ----------*5*

Գլուխ 2

Սուրբ Հարության տոնը մեր մանկապարտեզում----------*10*

Գլուխ 3

Օրինակելի պարապմունք----------*15*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Ժողովրդական մշակույթը ժողովրդի դարավոր կենտրոնացված փորձն է՝ նյութականացված արվեստում, աշխատանքային և կենցաղային իրերում ու առարկաներում: Ավանդույթներ, ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ. սրանք գաղափարական, բարոյական և գեղագիտական արժեքներ են, որոնք որոշում են ազգի դեմքը, նրա ինքնությունը, սոցիալական և հոգևոր յուրահատկությունը:

Սակայն բազմաթիվ պատճառներով ժամանակակից գլոբալ աշխարհում ժողովրդական մշակույթի հոգևոր ժառանգության ու առարկաների մեծ մասը կորուսվել են, ու այդ գործընթացը շարունակվում է առ այսօր: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ լուրջ վտանգ կա ներկա և հաջորդ սերունդներին ժողովրդական, գեղարվեստական մշակույթի արժեքավոր ժառանգությունից զրկելու և դրանով իսկ ամբողջությամբ ոչնչացնելու ժամանակակիցների հոգևոր կապը նախորդ սերունդների մշակութային ավանդույթներից ու ստեղծագործական փորձից: Այստեղից հետևում է, որ ավանդական ժողովրդական գեղարվեստական մշակույթի պահպանման խնդիրը դառնում է կարևոր, և այդ խնդրի լուծումը պետք է սկսել ուսումնական հաստատություններից: Արդեն մանկապարտեզում անհրաժեշտ է սաներին ծանոթացնել հայ ժողովրդական մշակույթին, քանի որ հենց այստեղ է տեղի ունենում երեխայի անհատականության ձևավորումն ու զարգացումը, իսկ ժողովրդական ավանդույթները դաստիարակում են մեր երկրի ապագա քաղաքացուն:

Ընտրված թեմայի արդիականությունը հատկապես կայանում է նրանում, որ մեր երկրում տիրող աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում կարևոր է աջակցել ազգային մշակույթին, կենտրոնացնել ժողովրդի բնավորությունը, դաստիարակել արժանի անհատականություն, որը կարող է զարգացնել և պահպանել հայ ժողովրդական ավանդույթները, տոներն ու ծեսերը, առհասարակ հայկականը, գիտակցել իր՝ որպես ազգային անհատականության տեղն աշխարհում: Կարծում ենք այս ամենին հասնելու, ինչպես նաև իր երկրի, պետության ու ժողովրդի նկատմամբ պատասխանատու քաղաքացի կրթելու լավագույն ուղին վաղ մանկությունից երեխային կրթելն է, հայրենիքով ու ազգայինով <<սնելը>>:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները.

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը՝ որպես ուսումնական և դաստիարակչական նյութ կրթական գործընթացի վաղ փուլում:

Աշխատանքի խնդիրներն են.

- ներկայացնել ազգային տոների ու ծեսերի ուսուցումը՝ որպես կրթական ու հատկապես սոցիալիզացիայի գործիք նախադպրոցական ավագ խմբերում,
- ներկայացնել դրանց կազմակերպման ու իրականացման առանձնահատկությունները սեփական փորձով:

Գլուխ 1. Ազգային տոներն ու ծեսերը՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների համար կրթական ու դաստիարակչական նյութ

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալականացումը բարդ կառուցվածքային գործընթաց է: Այն կախված է.

- աշխարհի մասին որոշակի գիտելիքների ամբողջականությունից (տեղեկատվական ճանաչողական բաղադրիչ),
- վերաբերմունքի բովանդակությունից,
- դրդապատճառներից և հարաբերություններից,
- հետաքրքրություններից, ձգտումներից (մոտիվացիոն-էմոցիոնալ բաղադրիչ)
- սեփական փորձի ակտուալացումից (գործունեության բաղադրիչ):

Վաղ մանկության տարիքում երեխայի սոցիալիզացիայի հիմնական միջավայրը ընտանիքն է, այնուհետև նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

Երեխայի սոցիալականացման գործընթացի վրա ազդում են նրա անհատական հատկանիշները (անհատականության տեսակն ու ինտելեկտը), հոգեկան վիճակները (ասթենիկ կամ ստենիկ) և բնորոշ տրամադրությունները, ուրիշների հետ շփման և փոխազդեցության մակարդակն ու ձևը: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր անհատի սոցիալականացումն ունի անհատական առանձնահատկություններ և դրսևորումներ, այն իրականացվում է որոշակի կանոններով և ունի իր մեխանիզմները: Սովորաբար, սոցիալականացման մեխանիզմները դասակարգվում են հետևյալ կերպ.

- ավանդական (ընտանիքի և անմիջական միջավայրի միջոցով);
- ինստիտուցիոնալ (հասարակության տարբեր ինստիտուտների միջոցով);
- ոճավորված (ենթամշակույթների միջոցով);
- միջանձնային;
- կրկնօրինակված (փորձի փոխանցման և իրազեկման միջոցով):

Ժողովրդական տոները՝ որպես նախադպրոցական տարիքի երեխայի սոցիալականացման միջոց, հնարավորություն են տալիս ընդլայնել երեխայի կյանքի սոցիալական հորիզոնները, մեծ հնարավորություններ են ստեղծում նրա անհատականության դրսևորման համար՝ որպես լիարժեք ինքնիրացման, վարքի և գործունեության ազատության միջավայր, լայն սոցիալական տարածք: Ժողովրդական տոների բազմազանությունը դրսևորվում է ճանաչողական ունակությունների ակտիվացման, անձնական զարգացման թերությունների շտկման, սոցիալական

իրականության մեջ կողմնորոշվելու և մարդկային հարաբերությունների ողջ համակարգի ինտելեկտուալ յուրացման հնարավորությունների մեջ: Յուրաքանչյուր մարդ և յուրաքանչյուր ազգ իմաստալից և արժանապատիվ ապրելու, ուրիշների հարգանքը վայելելու համար պետք է ճանաչի իրեն, հասկանա իր տեղն աշխարհում՝ այլ ազգերի մեջ: Նման գիտելիքն ու ըմբռնումը հնարավոր են, երբ օրգանապես յուրացվում է հայրենի մշակույթը, երբ անցյալը պարզ ու իմաստալից է: Միայն այդ դեպքում անձը կարող է ինքնուրույն և հաջողությամբ պլանավորել իր ապագան՝ կառուցելով դրա հիմքը ներկայում[1]:

Ցանկացած ազգային տոն իր մեջ ներառում է համամարդկային արժեքներ՝ ժողովրդի բարոյական փորձառությունը, աշխարհայացքը, աշխատանքի ըմբռնումը, մարդկային հարաբերությունները: Տոնը պահանջում է մարդկանց ընդգծված հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ, հյուրասիրություն՝ նույնիսկ անծանոթներին, ինչպես նաև բոլորի մասնակցությունը ընդհանուր զվարճանքին և տոնական ճաշին: Տոնի այս բոլոր բաղադրիչները կրում են մատաղ սերնդի բարոյական հիմքերի ձևավորման բարձր կրթական ներուժ: Ազգային տոնի սցենարում վերստեղծելով տոնական մշակույթի բոլոր ծեսերն ու ավանդույթները, նախադպրոցական ուսումնական հաստատության մա ձևավորում է բարոյական մշակույթի հիմքերը, ձևավորում հարգանք տարեցների, ծնողների նկատմամբ, սովորեցնում լինել ընկերասեր, հյուրընկալ, բարի[2]:

Նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական համակարգում տոների օգտագործումը՝ որպես կրթական նյութ, թույլ է տալիս մանկավարժներին ձևավորել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համընդհանուր մարդկային արժեքների և վարքագծի կանոնների համակարգի յուրացում: Սա իր հերթին բարձրացնում է երեխայիսոցիալականացման ու հասարակության մեջ ինտեգրվելու հնարավորությունը: Ցանկացած ժողովրդական տոնի կարևոր բաղադրիչը ծեսերն էին: «Ծեսերը սովորույթով հաստատված և առօրյա ավանդույթների հետ կապված գործողությունների ամբողջություն են, իրականացման կարգը, ինչ-որ բանի արարողություն»,- կարդում ենք Հ. Խառատյանի «Ազգային տոներ և ծեսեր»

---

1 Запорожец А. В. Избранные психологические труды: В 2-х т. Т. I. Психическое развитие ребенка.— М.: Педагогика, 1986.— 320 с.

2 Захарова С. Н. Праздники в детском саду. 2004 г.

աշխատությունում[3]: Մանկավարժության մեջ ժողովրդական տոներն ու ծեսերը համարվում են անհատի տրամադրությունը, հավատալիքները, աշխարհայացքն արտահայտելու միջոցներ: Դրանք ոչ միայն խորհրդանշական կերպով արտացոլում և խորացնում են մարդու զգացմունքները, այլև զգալիորեն ազնվացնում են նրան: Ժողովրդական տոների և ծեսերի դաստիարակչական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք հնարավորություն են տալիս արտահայտել սեփական զգացմունքներն ու մտքերը, արթնացնել հուզական զգացողություններն ու ապրումները[4]: Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում տոնը հաղորդակցական, կարգավորիչ, փոխհատուցող, զգացմունքային-հոգեբանական, գաղափարական, բարոյական և դաստիարակչական դեր է խաղում: Այստեղ տեղին ենք համարում մեջբերել Լիխաչովի միտքը. «Ազգային տարբերությունները կմնան 21-րդ դարում, եթե մենք զբաղվենք հոգիների դաստիարակությամբ, այլ ոչ միայն գիտելիքի մատուցմամբ»:

Ահա թե ինչու հայրենի մշակույթը, ինչպես հայրն ու մայրը, պետք է դառնա երեխայի հոգու անբաժանելի մասը, այն սկիզբը, որից ծնվում է անհատականությունը:

Շատ մանկավարժներ են անդրադարձել նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելու բանավոր ժողովրդական արվեստի օգտագործման խնդրին (Կուպրինա Լ. Ս., Է. Ն. Վոդովոզովա և ուրիշներ): Որպես տեսական գրականության ընդհանրացում ասենք, որ նախադպրոցական տարիքի երեխայի համար ժողովրդական տոների կրթական ուղղվածությունն այն է, որ նրանք հոգեպես հարստացնում են երեխային, ընդլայնում են նրա պատկերացումները իր ժողովրդի պատմության և ավանդույթների մասին և թույլ են տալիս նրան տիրապետել սեփական ազգի տոնական մշակույթի տարրերին: Ազգային տոնը արվեստի գրեթե բոլոր տեսակների սինթեզ է՝ գրականություն, երաժշտություն, նկարչություն: Այդ իսկ պատճառով ավելի նպատակահարմար է նախադպրոցական տարիքի երեխաներին տոնի տեսքով ծանոթացնել ժողովրդական ավանդույթներին: Միևնույն ժամանակ, կարևոր է ոչ միայն երեխաներին նոր գիտելիքներ տալը, այլև կազմակերպել նրանց

3 Խառատյան Հ., Ազգային տոներ և ծեսեր, https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5b0d680-d5add5a1d5bcd5a1d5bfd5b5d5a1d5b6-c2abd5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680c2bb.pdf, հասանելի է:

4 Гуров В. Н. Содержание и организация социальной адаптации личности ребенка в дошкольном учреждении. — Ставрополь, 1999, с. 198

անմիջական մասնակցությունը ծեսերի կատարմանը, ժողովրդական երգերի կատարմանը, թատերայնացմանը[5]:

Նախադպրոցական տարիքում տեղեկատվության ընկալման գործում հատկապես մեծ է հույզերի, էմոցիոնալ ընկալման դերը: Նրանք ստեղծում են որոշակի սոցիալական արժեքի զգացմունքային ընկալում՝ ողջ կյանքի համար ձևավորելով հետաքրքրություն դրանց նկատմամբ: Ուստի այս տարիքում ազգային տոներին ծանոթացումը կնպաստի հայրենիքի ու սեփական արմատների հետ հուզական կապի ձևավորմանը:

Ժողովրդական արվեստի և ավանդույթների հետ շփումը, ժողովրդական տոնախմբություններին մասնակցելը հոգեպես հարստացնում է երեխային, խթանում է հպարտությունը իր ժողովրդի մեջ և պահպանում է հետաքրքրությունը նրա պատմության և մշակույթի նկատմամբ: Ժողովրդական տոներն օգնում են երեխաներին ճանաչել և հարգել իրենց անցյալը, իրենց ծագումը, իրենց ժողովրդի պատմությունն ու մշակույթը[6]: Նախադպրոցական տարիքի երեխաների մասնակցությունը ազգային տոնին պայմաններ է ստեղծում ոչ միայն նրանց՝ ազգային մշակույթի տարրերին (տոններ, սովորույթներ, երգեր, խմբերգեր, պարեր, տարազներ և այլն) ծանոթության (ճանաչողական, մտավոր բաղադրիչ), այլ նաև դրական հուզական փորձառությունների համար. հուզական ընդգրկում (էմոցիոնալ բաղադրիչ): Բացի այդ տոնը իրականացնելը սեփական անմիջական մասնակցության հնարավորություն է ընձեռում՝ ապահովելով վարքային բաղադրիչը: Որքան ավելի լայն, բազմաչափ և վառ լինեն երեխաների հուզական փորձառությունները տոնին պատրաստվելու և մասնակցելու գործընթացում, որքան նրանց հնարավորություն տրվի ակտիվորեն գործելու, շփվելու հասակակիցների հետ, արտահայտվելու, այնքան ավելի մեծ կլինի ներառվածությունը, ազգային մշակույթին ինտեգրումը և դրանով իսկ երեխայի ազգային և մշակութային ինքնության ձևավորումը: Կարելի է ասել, որ ժողովրդական տոները նպաստում են են երեխաների ինքնակազմակերպմանը, սովորեցնում են ընտրություն կատարել և ադեկվատ գնահատել, հարմարվել որոշակի կանոնների և պատասխանատու լինել տոնում իրենց հանձնարարված դերի համար: Տոնի նախապատրաստմանն ու իրականացմանը մասնակցությունը արթնացնում և

[5] Еремеева М. В., Еремеев С. В. Все праздники в детском саду. 2004 г.

[6] Загвязинский, В. И. Теории обучения и воспитания: учебник: [рек...] / В. И. Загвязинский, И. Н. Емельянова; Учеб.-метод. об-ние вузов РФ по псих.-пед. образованию. — 2-е изд., стер. — Москва: Академия, 2013. — 256 с

զարգացնում են երեխայի ստեղծագործականությունը, ձևավորում գեղագիտական և գեղարվեստական ճաշակ[7]:

Նման տոների ժամանակ երեխաները ծանոթանում են ազգային տարազներին, խաղալիքներին, նկարներին, երաժշտական գործիքներին, ժողովրդական խաղալիքներին ու նկարներին: Բացի տեսական գիտելիքներից, երեխաները ձեռք են բերում նաև գործնական փորձ, քանի որ տոնին մասնակցելիս հնարավորություն ունեն օգտագործել խաղալիքներ, ժողովրդական տարազներ, նվագել նաև երաժշտական գործիքներ:

Այսպիսով, ժողովրդական տոների ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա անհերքելի է: Նրանց օգնությամբ հնարավոր է լուծել սոցիալականացման գրեթե բոլոր խնդիրները, և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալականացման հիմնական մեթոդների և տեխնիկայի հետ մեկտեղ կարող է և պետք է օգտագործվի ստեղծագործական այս հարուստ նյութը: Եթե ժողովրդական տոները ընտրվում են՝ հաշվի առնելով երեխաների տարիքային հնարավորությունները, և համակարգված աշխատանք է կազմակերպվում, գործընթացն անշուշտ դառնում է ուսանելի և հաճելի: Այսպիսով, երեխաների սոցիալականացման մեջ ժողովրդական տոների օգտագործումը լիովին արդարացված է: Ժողովրդական տոներն օգնում են երեխաներին ծանոթանալ իրենց շրջապատող աշխարհին, ծանոթացնել մեծահասակների իրականությանը և աշխարհին ակտիվ գործունեության և մասնակցության միջոցով: Նրանք ինքնաճանաչման հնարավորություն են տալիս՝ բացահայտելով սեփական դերը այլ մարդկանց և հասակակիցների միջև:

[7] Захарова С. Н. Праздники в детском саду. 2004 г.

Գլուխ 2. Սուրբ Հարության տոնը մեր մանկապարտեզում

Ցանկացած տոնի պատրաստվելու գործընթացը ինքնին ավելի ուսանելի ու հետաքրքիր է, քան բուն տոնակատարությունը: Ավագ խմբում Սուրբ Հարության տոնին նախապատրաստվելն ու այն իրականացնելը նպատակ ունի սեր արթնացնել ժողովրդական տոների, ավանդույթների, երգ ու պարի նկատմամբ:

Նպատակին հասնելու համար սահմանում ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել զատկական տարբեր սովորույթներ ու ավանդույթներ, ծեսեր,
- Երեխաներին մասնակից դարձնել յուրաքանչյուր ծեսի կապմակերպման աշխատանքներին, այդ թվում ծեսի համար անհրաժեշտ իրերի ու առարկաների պատրաստման գործընթացին,
- Նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ սաների ուշադրությունը հրավիրել կիրառվող առարկաների գեղարվեստական նշանակությանը, ծանոթացնել ժողովրդական զարդանախշերին ու դրանց կիրառությանը՝ զարգացնելով վերջիններիս մոտ գեղագիտական ճաշակ ու երևակայություն:

Տոնի խորհուրդը սաներին ներկայացնելուց էլ սկսվում է տոնին պատրաստվելու գործընթացը:

Պատրաստությունը սկսում ենք ածիկացանով: Ածիկը համարվում է մեռնող ու հառնող կյանքի խորհրդանիշ. ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծլում է ու միջուկից դուրս է գալիս ծիլը՝ խորհրդանշելով նոր կյանքի սկիզբը: Ազգային ու զատկական երգերի ու պարերի ներքո իրականացնում ենք ածիկացանի ծեսը: Երեխաները սովորում են ծեսի խորհուրդը:

Ծառի խորհրդաբանությունը հայակական տոնածիսական համակարգում առհասարակ կյանքի խորհուրդն է կրում: Ծառն իր պատկերագրական համակարգով ներկայացնում է տիեզերքի մոդելը[8]: Արմատները հողում, բունը՝ ներկայում, իսկ ճյուղերն ուղղված են ապագա: Այս խորհրդաբանությունը ներկայացնում ենք սաներին: ՈՒսումնասիրում ենք զատկական ծառը՝ որպես իրենց ընտանիքի խորհրդանիշ. որտեղ արմատները ընտանիքի ավագներն են տակտիկներն ու պապիկները՝ շատ խորաթափանց, իմաստուն, բունը հայրիկն ու մայրիկը, ովքեր ամուր հենված են նախորդ սերնդի վրա, լսում են նրանց խորհուրդներն ու կյանքում ճիշտ որոշումներ կայացնում: Ճյուղերն, իհարկե, իրենք են՝ ուղղված դեպի ապագա, բայ շատ ամուր հենված բնի ու արմատների վրա: Այս խորհրդաբանության ներկայացումից հետո անցնում ենք տոնի պատրաստության հաջորդ փուլին՝ զատկական ծառզարդարին:

Հայկական ավանդական զատկական ծառի զարդերը փնջած ձվերն էին, ինչը հմայական հատկություններ ուներ, և զարդարվում էր փնջված ու գեղեցիկ զարդարված ձվերով: Ձուն ևս կյանքի, զարթոնքի ու սիրո խորհուրդն էր կրում: առզարդարի արարողությունը ևս իրականացնում ենք զխմբում սաների անմիջական մասնակցությամբ և յուրաքանչյուրի ցանկությունների բարձրաձայնմամբ:

[8] Խառատյան Հ., նշվ աշխ., էջ 84:

Սուրբ Հարության տոնին պատրաստվելու հաջորդ փուլը խումբը տոնական տեսքի բերելն ու զատկական գեղեցիկ իրեր պատրաստելն է՝ ձվեր, փնջեր, տարբեր դեկորներ ու ձեռքի աշխատանքներ:

Այս աշխատանքների նպատակը սաների մոտ գեղագիտական ու գեղարվեստական ընկալում զարգացնելն է, գեղեցիկը տեսնելու և զգալու հատությունների ձևավորումն ու զարգացումն է:

Այս աշխատանքների ընթացքում ևս չենք մոռանում ազգայինն ու ավանդականը: Միասին ուսումնասիրում ենք ավանդական հայկական զարդանախշերը, ձվերի վրա արված, մանրանկարչությունից փոխ առնված նախշերը:

Հայկական մանրանկարներից, ֆիլմերից ու մուլտֆիլմերից ընտրված հատվածներ ենք դիտում, քննարկում զարդանախշերի տեսակները, գլխատառերի ձևավորումները, դրանց գույները և այլն: Ուսումնասիրում ենք ձվերի վրա հայկական զարդանախշերի կիրառման փորձը: Նկարչության պարապմունքներին փորձում ենք ստանալ համապատասխան զարդանախշեր:

Դե իսկ հետո ծանոթանում ենք ձվի ներկման հետ կապված ծեսերին ու սովորույթներին: Հնում ձուն բուսանախշվել է հետևյալ եղանակներով. Սոխի կեղևով ներկված ձվին սոսնձել են տարբեր տեսակի կանաչիների տերևներ: Այնուհետև մի քանի ժամ ձուն թթու թանի մեջ են պահել և հանելուց հետո սոսնձած տերևներից զգուշությամբ ազատել են: Սոսնձած մասերում կարմիր գույնի նախշազարդ տերևների դաջվածք է մնացել, իսկ շուրջը թթու թանից սպիտակել է: Ստացվել է տերևազարդ ձու: Մինչ սոխի կեղևներով ձվերի ներկելը, դրանց վրա դրվել են բույսերի տերևիկներ և ցանցավոր կտորով պինդ կապել այնպես, որ հեղուկը ձվի կեղևի և տերևի արանքը չթափանցի: Խաշելուց հետո ձուն կարմրել է, իսկ տերևների տեղը սպիտակ է մնացել:

Տոնի օրը ձվի ներկման արարողությանը մասնակից ենք դարձնում նաև երեխաներին: Ապա խաղում ավանդաբար մեզ հասած ու բոլորիս կողմից շատ սիրված ձվախաղն ու անուշ անում ներկված ձվերը:

Սովորաբար տոնական օրերը մանկապարտեզում նշում ենք տվյալ տոնին նվիրված ցերեկույթներով, իսկ եթե այպիսիք չկան, օրը շարունակում ենք ավանդական զատկական խաղերով, ժողովրդական երգ ու պարով: Հայոց տոները շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը համարյա միշտ համապատասխանում է տվյալ տոնի իմաստին:

Զատիկ

Տարվա մեջ ուրախալի
Դու մի հատ ես, ա՛յ Զատիկ,
Քեզ պես անուշ, քաղցր օր,
Չկա, չկա ոչ մի օր:

Ուշ ես գալիս, շուտ գնում,
Երկու օր էլ չես մնում,
Քո կարոտը մեր սրտում
Միշտ անպակաս է մնում:

Բարով եկար, ա՛յ Զատիկ,
Գարնան սիրուն խատուտիկ:

Բարով եկար, ա՛յ Զատիկ,
Գարնան սիրուն խատուտիկ:

Այսպիսով, ավանդական տոների մեջ կարելի է գտնել հայ ժողովրդական իմաստնության ոսկե հատիկները, որոնք խորին հարգանք և ակնածանք են առաջացնում ազգի նկատմամբ: Ժողովուրդը, որի պատմությունը գալիս է դարերի խորքից, իր ուսերին ավել բեռ չի բերում, այլ վերցնում է միայն ամենաարժեքավորն ու պիտանին՝ որի առանցքը նոր սերունդն է, ազգի ու գերդաստանի շարունակությունը, կուտակված սոցիալ-մշակութային փորձի փոխանցումը:

Ավանդական տոների գլխավոր ու կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ՝ որպես մանկապարտեզի ուսումնադաստիարակչական նյութ, այն է, որ այստեղ բոլորը մասնակիցներն ունեն լայն հնարավորություն դրևորելու իրենց անհատական ու կոլեկտիվ եսը: Դրանք արտացոլում են հայ ազգային առանձնահատկությունները և տալիս պատկերացում նրա կենսակերպի, արժեքների և ազգային կերպարի մասին:

Երեխաներին ուրախություն և հաճույք պարգևող տոները ծառայում են որպես նրանց ներդաշնակ կրթության կարևոր միջոց: Դրանց լիարժեք նախապատրաստումը և հաջող իրականացումը պահանջում են դաստիարակի լուրջ, ժամանակատար ստեղծագործ աշխատանք:

Այսպիսի աշխատանքները գրեթե միշտ հաջողությամբ են պսակվում, որովհետև, տևական ընդգրկում են ունենում ժամանակային առումով, իսկ կրթական նյութը մաս-մաս է մատուցվում՝ սաների ակտիվ մասնակցությամբ: Բացի այդ ողջ գործընթացի ընթացքում տիրող հուզական մթնոլորտը նպաստում է նյութի խորքային ընկալմանը: Մեկ տոնի միջոցով դաստիարակը հնարավորություն ունի սաների հետ բացահայտել մեր ժողովրդի ողջ մշակութային գանձատուփը:

Գլուխ 3. Օրինակելի պարապմունք

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Խոսքի, տրամաբանության զարգացում	ավագ	Հացի ծեսը իմ հայրենիքում, ինչպես այն հասավ մեզ	25-30ր
Նպատակ	Սեր ու հարգանք սերմանել հայրենիքի ու սեփական ժողովրդական ծեսերի ու ավանդույթների նկատմամբ, վերաբերմունք ձևավորել աշխատանքի ու դրա արդյունքում ստեղծված բարիքի նկատմամբ:		
Խնդիրները	• Զարգացնել խոսքն ու տրամաբանական մտածողությունը, • Հարստացնել ակտիվ բառապաշարը ածականներով, կազմությամբ բարդ բառեռով • Աշխատանքի նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորել:		
Անհրաժեշտ պարագաներ՝	Գյուղատնտեսական մեքենաների, հացատեսակների նկարներ, ալյուր, խմոր, ցորենի հասկ, լավաշ, հողի մշակումը, հերկումը պատկերող, հացի թխումըպատկերող նկարներ:		
<u>Խթանման փուլ</u>	Գրատախտակին ենք փակցնում նկարները, որոնք ներկայացնում են հացի ստեղծման ողջ գործընթացը և մտագրոհի մեթոդով անում հետևյալ հարցադրումները • *Ի՞նչ է սա, ինչի՞ համար են օգտագործում/ օգտագործել:* • *Ձեզնից ո՞վ է տեսել գութան:* • *Ի՞նչ գյուղատնտեսական մեքենաներով են հողը վարում:* • *Ո՞վ է վարում տրակտոր:* • *Երբ չկային մեքենաներ, ո՞վ էր օգնում*		

	մարդուն գյուղատնտեսական աշխատանքներն անելիս: Կարդում ենք հանելուկը Հողից ծնվեց, մեծացավ, Մի բարակ ոտք ունեցավ Ոտքի ծայրին, գլխի տեղ Մի փունջ ոսկի գնդասեղ: *Լսում ենք յուրաքանչյուր երեխայի, քաջալերում ճիշտ տեսակետների, ձևակերպված խոսքի համար, նուրբ շոկումներ անում՝ հիշատակելով իրենց իսկ մտքերը:*
<u>Իմաստի ընկալման փուլ</u>	Հա ցանեցի, ցանեցի, Եկավ ժամը ջրելու, Աչքս աղբյուր արեցի, Արտս ամբողջ ջրեցի… Հա ջրեցի, ջրեցի, Եկավ ժամը քաղհանի, Ձեռքս մանգաղ արեցի, Արտս ամբողջ քաղեցի: Ֆիզկուլտդադար Կատարում ենք գործողություններ, որ կատարում են մարդիկ հաց ստանալու գործընթացում. • Մի ոտքի վրա ձգվում ենք, մի ձեռքը բարձրացնելով վերև, • Այլուր ենք մաղում, • Խմոր ենք անում, • Գրտնակում ենք, • Լավաշ ենք խփում: Մեր նախնիները հացը պաշտել են, Աստծո կարգին են դասել -Թե գետնին փշուր ընկել է Կռացել, վերցրել են գետնից:

	<<Սուրբ>> բառով հացին պատվել են Ու հացին <<արդար>> են ասել, Որ հանկարծ բարին չցամաքի, Ու հացը տանից չկտրվի:
Կշռադատման փուլ	Պարապմունքի այս փուլին բնորոշ են ինչու և ինչպես հարցական դերանունների կիրառմամբ հարցադրումները: • Ձեր կարծիքով հեշտ են հացը ստանում, ինչո՞ւ, ապացուցիր, • Նկարագրիր հացի ստացման փուլերը, • Ի՞նչ մասնագիտություններ գիտես հացի արտադրության հետ կապված, • Ինչո՞ւ են մեր նախնիները հացը պաշտել: Պարապմուքնի վերջում խմբի՝ հատուկ հատկացված փոքրիկ վայրում գարու հատիկ ենք ցանում:
Շաբաթվա ընթացքում իրականացվող գործողություններ.	Պարապմունքից դուրս՝ շաբաթվա ընթացքում կատարվող աշխատանք. • Նկարել ցորենհատիկից մինչև հացն ընկած քայլերի հերթականությունը • Կառուցել հացատուն/ տրամադրել տուփեր, ստվարաթղթեր, խաղալ դերային խաղեր: • Մշակել մեր տնկած ծիլերը: • Սովորել ասացվածքներ ու շուտասելուկներ հացի մասին:

Տնօրենի եզրակացություն Երեխաները մասնակցում էին ակտիվ, պատասխանում հարցերին, ազատ էին հաղորդակցման ու շարժումների մեջ: Ուշադիր լսում էին հարցերն ու արագ կարողանում էին ընկալել:

Ավագ մանկավարժին հատկապես դուր եկավ հարցադրման տեխնիկան, ԽԻԿ համակարգի կիրառման յուրաքանչյուր փուլում մանկավարժի կողմից կիրառված հարցադրումները: Աշխատանքում բոլոր երեխաների ներգրավվածությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ելնելով մեր երկրում տիրող իրավիճակից ու մեր ազգի առջև ծառացած ժամանակակից խնդիրներից, կարծում ենք հատկապես պետք է կարևորվեն ազգային տոները, հայրենաճանաչությունն ու սեփական ինքնության գիտակցումը դեռ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:
- Տոներն ու դրանց նվիրված միջոցառումները գիտելիքը մատուցելու բավականին հետաքրքրական հնարավորություններ են տալիս, քանի որ գիտելիքի մատուցումն իրականացվում է հետաքրքրական պայմաններում, տևական ժամանակահատված և հաճախ ինտերակտիվ տարրերի համադրմամբ:
- Դրանք լայն հնարավորություն են ընձեռում առաջին հերթին ֆիզիկական զարգացման՝ ընկալման, խոսքի, լսողական, շարժումային և այլ օրգանների, և հետո նաև բովանդակային ու գաղափարական հսկայական նյութով են օժտված:
- Միջոցառումների ու տոների կազմակերպման ճիշտ մեթոդների ընտրման, դրանց մանրամասն պլանավորման դեպքում դաստիարակը կարող է իր առջև դրված մի շարք խնդիրների լուծումը ստանալ:
- Ուստի առաջարկում ենք տոնական միջոցառումների պատրաստվելիս ցուցաբերել խիստ անհատական մոտեցում: Մասնակցությունն ու դերաբաշխումը կատարել՝ ելնելով երեխայի հնարավորություններից, աշխատելով հնարավորինս բացահայտել նրա հնարավորությունները:
- Բացի այդ կարծում ենք տոներն ու դրանց նվիրված միջոցառումները հայրենասիրական գաղափարների սերմանման լավագույն հնարավորություններ են ընձեռում, քանի որ դրանցում եղած մեծ հուզական ֆոնը լավագույնս հնարավորություն է ընձեռում գիտելիքը դարձնել կայուն և հիմնավոր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խառատյան Հ., Ազգային տոներ և ծեսեր, https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5b0d680-d5add5a1d5bcd5a1d5bfd5b5d5a1d5b6-c2abd5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680c2bb.pdf, հասանելի է:
2. Гуров В. Н. Содержание и организация социальной адаптации личности ребенка в дошкольном учреждении. — Ставрополь, 1999
3. Еремеева М. В., Еремеев С. В. Все праздники в детском саду. 2004 г.
4. Загвязинский, В. И. Теории обучения и воспитания: учебник: [рек...] / В. И. Загвязинский, И. Н. Емельянова; Учеб.-метод. об-ние вузов РФ по псих.-пед. образованию. — 2-е изд., стер. — Москва: Академия, 2013>
5. Запорожец А. В. Избранные психологические труды: В 2-х т. Т. I. Психическое развитие ребенка.— М.: Педагогика, 1986
6. Захарова С. Н. Праздники в детском саду. 2004 г.